ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **24.11.2023թ.**

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը:

Մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Ս. Սարգսյան	- ԱԱՏՄ ղեկավար
Թ. Հակոբյան	- ԱԱՏՄ ղեկավարի տեղակալ
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Հ. Եղիազարյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող

Չեն մասնակցել՝

Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Ս. Սահակյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Օրակարգի հարցեր.

1. Տեսչական մարմնի 2024 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

2. Տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

3. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվության քննարկում, Տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողանի գնահատման հաստատում:

4. Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

5. Տեսչական մարմնի հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության տեսուչների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին, ինչպես նաև ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելուն հավանության արժանացում:

6. Տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելուն հավանության արժանացում:

Ա. Ավանեսյանը առաջարկեց հաստատել օրակարգը:

Ս. Սարգսյանը առաջարկեց օրակարգում լրացնել ևս մեկ հարց, կապված ԱԱՏՄ 2024 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին և բյուջետային հայտի նախագծին հավանության արժանացնելու հետ:

Որոշվեց օրակարգը լրացնել հարցով՝ «Հավանություն տալ ԱԱՏՄ 2024 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին և բյուջետային հայտի նախագծին»:

Խորհրդի անդամների միաձայն քվեարկությամբ (7 կողմ) օրակարգը հաստատվեց:

1. Քննարկվեցին օրակարգի հարցերը՝

- Տեսչական մարմնի 2024 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

- Տեսչական մարմնի 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

Ս. Սարգսյանը ներկայացրեց նախատեսվող ԱԱՏՄ 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը, նշելով, որ դրանով հստակ նշված են խնդիրները և դրանց լուծման համար իրականացվելիք գործողությունները: Խնդիրների լուծման քայլերը ուղղված են հիմնականում օրենսդրական նախաձեռնություններ ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև տեսչական մարմինների աշխատանքները համակարգող գրասենյակի հետ համաձայնեցվել են մշակելու երկու առանձին օրենքներ՝ «Առողջապահական վերահսկողության մասին»

և «Աշխատանքի վերահսկողության մասին», որոնց առաջարկվող տարբերակները նախատեսվում են ներկայացնելու գրասենյակ մինչև հաջորդ տարվա երկրորդ եռամսյակ: Նշեց, որ ստուգաթերթերի լրամշակման աշխատանքներ են նախատեվում ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխություններով պայմանավորված, ինչպես նաև հիմնական շեշտը դրվել է իրազեկման աշխատանքների վրա, որոնք ավելի արդյունավետ են տնտեսավարողների կողմից օրենքների պահպանման և ճիշտ կիրառման ուղղությամբ:

Ա. Ավանեսյանը նշեց, որ այժմ ԱԱՏՄ-ին վերաբերող մի շարք գործող օրենքներ են առկա, որոնցով կարգավորված են վերջինիս լիազորությունները և հարցրեք, թե արդյո՞ք այդ բոլոր օրենքներում առկա կարգավորումները մեկ օրենքով են սահմանվելու:

Ա. Դանիելյանը նշեց, որ նախատեսվող օրենքներով կարագավորվելու են այն հարաբերությունները որոնք ոլորտային օրենքներով չեն կարգավորված և նման մոտեցումը նախատեսված է բոլոր տեսչական մարմինների համար: Այդ օրենքներով սահմանվելու են համապատասխան ոլորտի վերահսկողության առանձնահատկությունները, գործիքակազմը, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև այն ակնկալիքները որոնք անհրաժեշտ են տնտեսավարողների համար, վերջիններիս համար վերահսկողության գործընթացը ավելի թափանցիք դարձնելով: Այժմ գործող օրենքներով սահմանված են տարբեր կարգավորումներ, մեկ դեպքում նախատեսվում է ստուգումների իրականացում, մյուս դեպքերում վարչարարության իրականացում, ինչը ազդում է իրականացվող վերահսկողության որակի վրա:

Ռ. Սարգսյանը նշեց, որ քաղաքականությամբ պայմանավորված այժմ ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը փորձ է արվում ավելի թեթևացնել՝ սահմանելով հիմնական սկզբունքները և երաշխիքները, իսկ դրանից բխող կարգավորումները նախատեսվում են ապահովել այլ օրենքներով կամ ենթաօրենսդրական իրավական ակտերով:

Տ. Քեյանը խնդրեց հստակեցնել, թե գործող օրենքներով ինչ կարգավորումներ են բացակայում, որոնք անհրաժեշտ են նախատեսելու նոր օրենքներով:

Ա. Դանիելյանը պարզաբանեց, որ օրենքներով նախատեսվելու են տեսչական մարմինների աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, գործիքակազմը: Օրինակ այժմ գործում է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, սակայն չկա որևէ կարգավորում որով հստակ սահմանված լինի, թե որ դեպքում ինչ գործողություն պետք է իրականացվի: Տեսչական մարմինները յուրաքանչյուրը նույն իրավիճակներում տարբեր ձևով են արձագանքում, ինչը հաճախ դատարաններում բերում է իրականացված գործողությունների անվավերությանը և միանշանակ չի ընկալվում:

Ս. Սարգսյանը նշեց նաև, որ մյուս տարի նախատեսվում է իրականցնել ստուգումներ 850 տնտեսավարողների մոտ: Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգումների քանակը որոշելու հիմքում դրվել է ոչ թե հարկային

մարմնի կողմից տրված տեղեկատվությունը այլ տրված լիցենզիաների առկայությունը: Նաև նշեց, որ այս տարի այն տնտեսավարողներում ում մոտ ստուգումները դեռ ընթացքի մեջ են կամ նոր են սկսվել, մյուս տարվա ծրագրով դրանք չեն ներառվել: Միաժամանակ նախատեսվում է ևս 21 տնտեսավարողների մոտ իրականացնել ստուգումներ, որոնք գործում են սանիտարահամաճարակային ոլորտում, չնայած որ վերջիններս ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների համապատասխանում են վերահսկողության իրավասության ոլորտներին, սակայն դրանք իրականացնում են այնպիսի գործառույթներ որոնց համար նախատեսված չէ համապատասխան սանիտարական կանոններ, ինչպես նաև սահմանված չեն ստուգաթերթեր: Դրանով պայմանավորված այդ տնտեսվարողներին փոխարինվել է ցուցակում հաջորդ ռիսկային տնտեսվարողները:

Ա. Ավանեսյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի հարցերին միաձայն քվեարկեցին կողմ (7 կողմ):

2. Քննարկվեց օրակարգի հարցերը՝

- Տեսչական մարմնի հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության տեսուչների քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին, ինչպես նաև ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելուն հավանության արժանացում:

- Տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելուն հավանության արժանացում:

Ս. Սարգսյանը նշեց, որ ԱԱՏՄ սահմանային բժշկասանիտական հսկիչ կետերը դադարեցվելուց հետո դրանց համար առկա հաստիքները կրճատվել էին և դրանք փոխարինվել էին տեխնիկական սպասարկում իրականացնող հաստիքներով: Նախորդ տարվա նոյեմբերին Խորհրդի կողմից հավանության է արժանացել ԱԱՏՄ հաստիքացուցակի նախնական տարբերակը, որով այդ տեխնիկական սպասարկում իրականացնող հաստիքները բաշխվել էին ԱԱՏՄ համապատասխան տարածքային կենտրոնների միջև, նախատեսելով բժիշկ՝ հիգիենիստի և բժիշկ՝ համաճարակաբանի հաստիքներ: Այժմ ներկայացված տարբերակով այդ հաստիքները նախատեսվում են որպես քաղաքացիական ծառայության պաշտոններ՝ ավագ տեսուչ:

Ա. Ավանեսյանը հարցրեց, թե նախատեսվող փոփոխությունը բյուջեի առումով աշխատավարձի վրա ինչ ազդեցություն է ունենալու:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ տվյալ պաշտոնների համար 2024 թվականի բյուջեով նախատեսված է քաղաքացիական ծառայողների վարձատրությանը համապատասխան գումար: Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում (ծածկագրեր՝ 66-27.4-Մ2-5, 66-27.4-Մ2-6)

նախատեսվում է ընդլայնել տվյալ պաշտոնի համար պահանջվող մասնագիտությունները:

Ա. Ավանեսյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի հարցերին միաձայն քվեարկեցին կողմ (7 կողմ):

3. Քննարկվեց օրակարգի հարցը՝

- Հավանություն տալ ԱԱՏՄ 2024 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին և բյուջետային հայտի նախագծին:

Ս. Սարգսյանը նշեց, որ 2024 թվականին առանձնահատուկ մեծ ծախսեր չեն նախատեսվում, աշխատավարձների հետ կապված առկա է մի փոքր աճ: Այս տարի ծախսը համեմատած ավելի շատ էր հաշվի առնելով ԱԱՏՄ-ին հատկացված նոր շենքի վերանորոգման հետ կապված աշխատանքները, ինչը արդեն ավարտվում են և նախատեսվում է աշխատողների տեղափոխումը այդ շենք, իսկ մյուս տարի գումարի ծախսը բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ է նախատեսված:

Ա. Ավանեսյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի հարցին միաձայն քվեարկեցին կողմ (7 կողմ):

4. Քննարկվեց օրակարգի հարցը՝

- Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվության քննարկում, Տեսչական մարմնի 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողանի գնահատման հաստատում:

- Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

Հ. Եղիազարյանը ներկայացրեց 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվությունը և կատարողականի գնահատումը՝ շեշտադրելով որակի ապահովման վարչության կողմից առանձնացված հիմնական խնդիրները: Նշեց, որ արձանագրված ընթացիկ խնդիրները կրկնվող բնույթ ունեն, հիմնականում անփության և անուշադրության հետևանքով: Դրանց մեծ մասը ընթացիկ սկզբունքով հայտնաբերվում և տեղեկացվում են, որոնք վերացվում են: Անդրադարձավ ԱԱՏՄ-ի դեմ ներկայացված վարչական և դատական կարգով բողոքներին, ինչպես նաև ներկայացրեց նախորդ տարվա համեմատականը: Նշեց, որ ԱԱՏՄ-ի կողմից կատարված՝ նախորդ տարվա ժամանահատվածի համեմատ աշխատանքները ավելի են կրկնապատկվել: Իրականացվող միջոցառումների շրջանակներում տրված կարգադրագրերի կատարողականների նկատմամբ հսկողության արդյունքում նախորդ տարի արձանագրվել են կարգադրագրերի կատարողականների ուշացումներ և անհետևողականություններ, սակայն այս տարի նշված հարցերով էական խախտումներ չի արձանագրվել: Մտահոգիչ է շարունակում մնալ կադրային համալրումը: Մրցույթներին և համալրումներին զուգընթաց քիչ չեն նաև ազատումները, որոնք պայմանավորված են այլ բարենպաստ պայմաններով ապահովված աշխատանքի անցնելը: Կատարողականի գնահատման

շրջանակներում նշեց ստուգումներին առնչվող միջին ցուցանիշների, ստուգմ
տևողության, կադրային ներուժի, գործուղումների, խախտումների միջին տոկո
վերաբերյալ: Նշեց, որ այդտեղ առկա է դրական առաջընթաց վերստուգումների
ստուգումների տևողության հարաբերակցության առումով, սակայն արձանագրվել
դեպքեր, երբ ստուգման կամ վերաստուգման տևողությունը նույն 15 օրն է:

Ա. Ավանեսյանը հարցրեց, թե ինչն է պատճառը:

Հ. Եղիազարյանը պատասխանեց, որ պատճառները հիմնականում կայանո
է նրանում, որ վերստուգումների և ստուգումների հանձնարարագրեր
հրապարակվում են միաժամանակ և մի քանի տնտեսվարողների համար, որ
ժամանակ նշված ժամանահատվածում իրականացվում է ոչ թե մեկ ստուգում այլ մ
քանի ստուգում և վերստուգում:

Ս. Սարգսյանը նշեց, որ այդ խնդիրները կարագավորելու ուղղությամբ
առաջիկայում նախատեսված է իրականացնել քննարկում:

Հ. Եղիազարյանը ներկայացրեց նաև Որակի ապահովման վարչության 2024
թվականի գործունեության տարեկան ծրագիրը: Նշեց, որ միջոցառումները
նախատեսված են ապահովել հիմնականում երեք ուղղությամբ՝ կարգապահական
կանոնների պահպանման ուսումնասիրություն, ԱԱՏՄ-ի դեմ ներկայացված բողոքներ
և ԱԱՏՄ-ի գործունեության արդյունքների ուսումնասիրություն, որի շրջանակներում
ուսումնասիրվելու է ողջ վերահսկողության գործընթացը: Ծրագրի կատարման
վերաբերյալ նախատեսվում է Խորհրդին ներկայացնել հաշվետվություն
եռամսյակային կտրվածքով:

Ա. Դանիելյանը նշեց, որ ներկայացված ծրագրի վերաբերյալ առկա են
տեխնիկական առաջարկություններ և առաջարկեց հարցը վերապահումով
հաստատել՝ ծրագիրը հաստատել ներկայացված առաջարկությունների հիման վրա:

Ա. Ավանեսյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի հարցերին միաձայն քվեարկեցին կողմ (7
կողմ):

Որոշվեց.

1. Հաստատել ԱԱՏՄ 2024 թվականին իրականացվող ստուգումների տարեկան
ծրագիրը:

2. Հաստատել ԱԱՏՄ 2024 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

3. Հաստատել ԱԱՏՄ Որակի ապահովման վարչության 2023 թվականի
գործունեության տարեկան ծրագիրը:

4. Հաստատել ԱԱՏՄ 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության
կատարողանի գնահատումը:

5. Հավանություն տալ ԱԱՏՄ հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և
հակահամաճարակային վերահսկողության տեսուչների քաղաքացիական
ծառայության պաշտոնների անձնագրերին, ինչպես նաև ռիսկի գնահատման,
ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության գլխավոր
մասնագետի (ծածկագրեր՝ 66-27.4-Մ2-5, 66-27.4-Մ2-6) քաղաքացիական
ծառայության պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելուն:

6. Հավանություն տալ ԱԱՏՄ հաստիքացուցակում փոփոխություններ
կատարելուն:

7. Հավանություն տալ ԱԱՏՄ 2024 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշվին և բյուջետային հայտի նախագծին:

8. Ընդունել ի գիտություն ԱԱՏՄ Որակի ապահովման վարչության 2023 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության հաշվետվությունը: ԱԱՏՄ ղեկավար Ս. Սարգսյանին.

1) միջոցներ ձեռնարկել ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2023 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությունում նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ.

2) ապահովել ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2023 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությունով ներկայացված առաջարկությունների կատարումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ